

# Տող

[string]

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Սա ինտերակտիվ խնդիր է: Համակարգիչը մտապահում է անգլերեն այբուբենի փոքրատառերից կազմված  $n$  երկարությամբ ինչ-որ տող՝  $S$ , անհրաժեշտ է հարցումներ կատարելով գտնել մտապահված տողը: Հարցումներ կատարելու համար պետք է օգտվել `bool query(string T)` ֆունկցիայից, որը կվերադարձնի `true` եթե  $T$ -ն  $S$ -ի ենթահաջորդականություն է, հակառակ դեպքում կվերադարձնի `false`: Դուք պետք է գրեք `string solve()` ֆունկցիա, որը կկանչվի մեկ անգամ և աշխատելուց հետո պետք է վերադարձնի մտապահված տողի համար Ձեր գտած պատասխանը: Հիշեցնենք, որ  $T = T_1T_2\dots T_m$  տողը կլինի  $S = S_1S_2\dots S_n$  տողի ենթահաջորդականություն, եթե գոյություն ունենան  $1 \leq i_1 < i_2 < \dots < i_m < n$  թվեր այնպիսին, որ  $S_{i_1}S_{i_2}\dots S_{i_m} = T$  Մտապահված տողի երկարությունը կլինի առավելագույնը 500: Ծրագրի կատարած բոլոր հարցումների տողերի գումարային երկարությանը նշանակենք  $Q$ -ով: Իհարկե  $Q$ -ի վրա կան սահմանափակումներ:

Գրելդեր՝ `grader.h` (<http://i.olymp.am/static/problems/string/grader.h>)

Լուծման օրինակ՝

```
#include <iostream>
#include <string>
#include "grader.h"
using namespace std;

string solve() {
    // query example

    string X = "a";
    bool ans = query(X);
    if(!ans) {
        X = "b";
    }
    return X;
}
```

## Ենթախնդիրներ

1.  $N \leq 20$ ,  $Q \leq 10^5$  (20 միավոր)
2.  $N \leq 50$ ,  $Q \leq 2 \cdot 10^5$  (10 միավոր)
3.  $N \leq 100$ ,  $Q \leq 6 \cdot 10^5$  (10 միավոր)
4.  $N \leq 500$ ,  $Q \leq 6 \cdot 10^5$  (50 միավոր)
5.  $N \leq 100$ ,  $Q \leq 3 \cdot 10^5$  (10 միավոր)